

**ՎԱՐԱՋԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐՁԻՆ
ԱԿԱՆԱՏԵՍ-ՎԿԱ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԻՑ**



Գրեթե մեկ դար առաջ հայոց հնագույն մայրաքաղաք Տուշպա-Վանում ծնված Վաստակավոր ճարտարապետ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, «Վասպուրական» հայրենակցական միության պատվավոր նախագահ Վարազդատ Հարությունյանը մեզ հետ չէ այլևս:

Հայրենի բնօրրանի ակունքներից եկող նրա երիտասարդական ուժն ու եռանդը մշտապես զարդարել են իր վաստակաշատ կյանքի իմաստալից ուղին:

Մինչև վերջ էլ նա սքանչելի հիշում էր իր հայրական տունն Այգեստանի Խաչփողանում...

Դժվար է եղել նրա մանկությունը: Նա անցել է գաղթի դաժան ճամփաներով, որպես ականատես-վկա տեսել հայ ժողովրդի անասելի տառապանքները: Նրա ականջներում դեռ հնչում էին ժողովրդական «Դ-լե յաման» եղերերգի տխուր հնչյուններն այլազան խոսքերով.

«Գիշեր ու գօր լաց ու ողբ եմ ես լսում,

Չունիմ հանգիստ, չունիմ դադար, չունիմ քուն,

Աչքս փակում՝ մեռելներ են միշտ տեսնում,

Կորցրեցի ազգ, բարեկամ, հող ու տուն»:

Մակայն Վարազդատ Հարությունյանը մեր տառապած, բայց փառապանծ հայ ժողովրդի նման հաղթահարել է բոլոր տեսակի դժվարությունները եւ իր կյանքը դարձրել բեղուն աշխատանքով եւ ստեղծագործական հաջողություններով առլեցուն մի դարաշրջան: Քանզի առաջնորդվել է «Մենք պիտի հաղթենք նաեւ ապրելով» նշանաբանով եւ ոչ միայն վերապրել է, այլեւ անկասելի հրայրքով նվիրվել գիտական, հասարակական, հրապարակախոսական, ստեղծագործական ասպարեզներին, հեղինակել մի շարք կոթողային մենագրություններ, որոնցով աշխարհին է ներկայացրել հազարամյակների հնություն ունեցող մեր մշակույթը, մեր ճարտարապետական անկրկնելի հուշարձանները, որոնք, ավա՞ղ, այժմ ավերվել են, եւ նա ափսոսանքով միշտ կրկնում էր. «Այժմ Եղեռնը վերաբերում է հայկական հուշարձաններին...»: Մակայն որպես ազգամվեր հայ մտավորական նա չի լռել, այլ իր համարձակ եւ խորխտ ձայնը բարձրացրել է ի լուր մարդկությանը, որպեսզի չարին վերջ տրվի եւ բարին հաղթանակի աշխարհում...

Վարազդատ Հարությունյանը, որպես Հայոց ցեղասպանությունից վերապրած ականատես-վկա, խորհրդանշում էր հայ ժողովրդի կորցրած Էրզիրը, ուստի պահանջատիրության կրակը միշտ բորբոք էր նրա սրտում: Իգուր չէ, որ Վան-Վասպուրական հայրենակցական միության պատվավոր նախագահն էր եւ վաստակյալ նահապետին հատուկ իրավունքով նա այցելել է մեր պապենական վայրերը: Իր աչքերով տեսել Աղթամարի Ս. Խաչ հոյակերտ եկեղեցին, կրկին մկրտվել Վանա ծովի ջրերում եւ, ստեղծագործական նոր ուժ ու ավյուն ստացած, վերադարձել՝ օրինակ ծառայելով շատ-շատերին: Եվ մեկը մյուսի հետեւից սկսել են լույս տեսնել նրա արդեն վերջին շրջանի աշխատությունները, որոնք վերաբերում էին ոչ միայն աշխարհով մեկ սփռված հայ ճարտարապետների կյանք ու գործին, այլեւ տարբեր երկրներում իր անթիվ ու անհամար հանդիպումներին, հրապարակախոսական ելույթներին, հարցազրույցներին, հուշագրություններին, որոնք դարակազմիկ էին, ինչպես նրա գրքերից մեկի խորինաստ խորագիրը՝ «Դարը մեր մեջ, մենք՝ դարի», քանի որ Վարազդատ Հարությունյանի գործերը մնալու են դարերին...

Ստորեւ ներկայացնում են Հայոց ցեղասպանության ականատես վկա վերապրող Վ. Հարությունյանի պատմած հուշ-վկայությունը, որը

ես գրառել եւ տեսագրել եմ 1997 թ.: Հուշն ամբողջությամբ տես՝ Վ. Սվազյան, «Հայոց Յեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ» (Երեւան, 2000, թիվ 43, էջ 123-124) գրքում: Հարցազրույցի տեսագրությունը պահվում է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի արխիվում:

ՎԱՐԱՉԳԱՏ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

(ԾՆՎ. 1909 թ., ՎԱՆ)

Ծնվել եմ Վան քաղաքի Այգեստաններում, Չաղլի փողանում: Իմ մայրն ասում էր՝ ամեն աշուն մեկը կզոտեինք, այսինքն՝ մի զավակ կունենային: Հայրս ու մայրս ունեին յոթը երեխա՝ չորս որդի, երեք դուստր:

Մենք ապրում էինք Չաղլի փողանում, նահապետական մի տան մեջ: Փողոցի կողմում ապրում էր իմ Ջատիկ տատիկը, որը չուզեց տունը բողմել եւ նահատակվեց: Մի կողմում հորեղբայրներս էին ապրում, մյուս կողմում՝ մորեղբայրներս: Բայց հիշարժանը մեր այգիներն էին: Հորեղբայրս՝ Տեր-Արթինենց Հարությունը ծաղիկներ էր աճեցնում: Ում տանը որ ուրախություն լիներ, գալիս ծաղիկ էին տանում:

Հայրս գնացել էր Պոլիս դարիբության, սովորել էր դերձակություն եւ վերադարձել Վան: Մենք ապրում էինք խաղաղ, երջանիկ ու ստեղծագործական կյանքով:

Հիշում եմ Վանի 1915 թ. իրադարձությունները՝ ապրիլի 7-ին սկսվեց հայերի ապստամբությունը, որը մայիսի 4-ին հաղթանակով ավարտվեց: Թուրքերը շատ վայրագ էին: Շատ նշանավոր հայ մտավորականների նախօրոք բանտարկել էին: Նրանց մեջ էին Արշավիր Մոլախյանն ու իր ընկերները, որոնց բոլորին սպանել էին թուրքերը: Ամբողջ ժամանակ կրակոցները գալիս էին Քաղաքամիջում եւ Այգեստանում: Մերոնք սահմանափակ փամփուշտներով կռվում էին բազմահազար կանոնավոր թուրքական զորքերի դեմ, որոնք լսելով ռուսական զորքերի գալուստը՝ ճողոպրեցին:

Ռուսական բանակի քաղաքականությունն էր: Ստիպված հետ քաշվեցինք: Հիշում եմ, մայրս ու քույրս հաց էին թխում: Հայրս խորջիններն էր պատրաստում, որ մեր ունեցածը տեղավորենք:

Խաչփողան փողոցից դուրս եկանք: Մեր ունեցածը բարձել էինք կովի վրա, որն իր համար անսովոր բեռը իր թիկունքից գցեց ու

փախավ: Ստիպված մեր ունեցածը մենք շալակեցինք, դուրս եկանք Վանից, դեպի Բերկրի բարձրացանք:

Բանդիմահու կամուրջով անցնելիս վանեցիները շատ գոհ ունեցան: Կամուրջը նեղ էր, այնքան ցավալի էր, շատերն ստիպված էին երեխաներին գետը նետել:

Ամենից կատաղի կռիվների մենք հանդիպեցինք Բերկրիի մոտ: Ռուսական զորքերը երեխաներին վերցրել էին ռուսական ֆուրգոնների վրա, եւ քողերը, որոնք էն ժամանակ վարձված էին հայերին կոտորելու համար, հարձակվեցին մեզ վրա: Ֆուրգոնները շուտ էին գալիս: Երեխաները ջուրն էին թափվում, եւ մեզ ուղեկցող ռուս զինվորները քողերին քշեցին, որ ձորի բերանը բացեն: Նրանք քողերին քշեցին, ձորի բերանը բացեցին, իրենք վերադարձան: Ինձ նստեցրել էին ֆուրգոնի մեջ: Ճանապարհին Իգդիրում մնացինք: Ոմանք դժգոհեցին, որ մենք սոված ենք ու հաց ենք ուզում:

Արաքս գետն անցանք: Եկանք, Էջմիածնի վանքի պատերի տակ գաղթականները լցված, տիֆի համաճարակից օրական հարյուրավոր մարդիկ էին մեռնում: Վիճակը շատ ծանր էր: Տներն անգամ հիվանդանոց էին դարձել: Եղբայրս՝ Գուրգենը, երբ մահացավ, եւ տեսա, թե ինչպես փայտը թարս ու շիտակ շարում են իրար վրա, այնպես էլ մեռելներին էին իրար վրա շարում, որ գիշերը տանեն եղբայրական գերեզմանը գցեն:

Հայրս տեսավ, որ մենք եւս պիտի մեռնենք, մեզ հավաքեց, տարավ Թիֆլիս: Այնտեղ էին հորեղբայրս՝ Տեր-Հարությունյաններն իրենց ընտանիքով, որոնք 1896 թ. դեպքերից հետո գաղթել էին: Ես, մայրս, հայրս, եղբայրս՝ Արծրուն Հարությունյանը՝ Արաքսայի հայրը: Մեզ տեղավորեցին Արամյան հիվանդանոցում: Այնտեղ տիֆից վախճանվեց հայրս:

Մենք մեզ գտանք որբանոցում: Ես, քույրս եւ եղբայրս Բարեգործականի որբանոցում ենք մեծացել, որի շեֆությունը Հովհաննես Թումանյանն էր իրականացնում: Նա որդեգրել էր երեք տղաների՝ ապագա բանաստեղծ Վաղարշակ Նորենցին, գրականագետ Նորայր Դաբաղյանին եւ Միհրան Թյությունջյանին: Թիֆլիսի Ծիրանավոր վանքի բակում էր որբանոցը: Ուխտավորները գալիս էին մատաղ անելու, եւ մենք սնվում էինք, բայց հետո դժվարացավ:

Մեր հայոց լեզվի ուսուցիչ Ծերուն Թորգոմյանը հրատարակում էր «Համբավաբեր» հանդեսը, 1916 թ. մարտ ամսվա համարում լույս է տեսել մեր որբանոցի լրիվ ցուցակը: Այդտեղ եւ երկու հարյուր չորս

համարն են, ընդամենը յոթը տարեկան, եղբայրս՝ ինը, քույրս՝ տասնմեկ տարեկան: Ծնված օրս հայտնի չէր, ես գրեցի նոյեմբերի 29-ը՝ հայ ժողովրդի վերածննդի օրը:

Որբանոցում դրությունը շատ վատացավ: Կիսասով վիճակում ես ու եղբայրս՝ Արծրունը, որբանոցից փախանք, եկանք մեր հարազատների մոտ: Հորեղբայրս ասաց. -«Տղաք, որո՞՞ հույսին եք եկել»:

Եթե թուրքերը մեզ չկոտորեցի՞ն, ապա գաղթից հետո մեր ինը հոգիանոց ընտանիքից միայն ես, մայրս ու եղբայրս մնացինք:

Ես փողոցներում կոշիկ եմ ներկել: Ջուր եմ ծախել: Միզարեթ եմ ծախել: Շապիկ չունեի: Մայրիկս հովանոցի կտորից ինձ շապիկ կարեց, որ դպրոց գնամ: Բայց ոտքիս կոշիկները երկուսն էլ նույն ոտքին էին: Ես ասացի՝ ես էդպես դպրոց չեմ գնա: Եղբայրս գիշերով ելել հարմարեցրել էր, ես ես կոշիկները հագա:

Թիֆլիսում կար Տիգրան Նազարյանի ճաշարանը, գաղթականներին այնտեղ կերակրում էին: Իր այգու մեջ կար փայտաշեն մի թատրոն, ես գաղթականներին այնտեղ քնեցնում էին բենի գետնի վրա: Եղեռնից վերապրած վանեցիների մեջ երեւի ես միակ բախտավորն էի, որ առիթ ունեցա Հայաստանից գնալ եւ տեսնել Վանը:

Վասպուրական հայրենակցական միությունը կազմակերպեց դեպի Վան-Վասպուրական խումբ. երեսունմեկ հոգուց միայն ես էի Վանում ծնված: Վանը մ.թ.ա. իններորդ դարում հիմնադրված Տուշպա քաղաքի վրա է կառուցվել:

Մենք չորս օր մնացինք Վանում: Բարձրացանք Վանի բերդը: Հուզումնալից պահեր ապրեցինք Վանում: Ոչ մի եկեղեցի չի մնացել: Վանը վերածվել է նոր քաղաքի, որտեղ ապրում է հարյուր յոթանասուն հազար բնակիչ: Իսկ մեր ժամանակ՝ երեսունհինգ-քառասուն հազար էր, որի մեծ մասը հայեր էին:

Եղեռնը հիմա վերաբերում է հայկական հուշարձաններին:

***ՎԵՐԺԻՆԵ ՄՎԱԶԼՅԱՆ, Բանասիրական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի
առաջատար գիտաշխատող***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՄԱՍԻՆ

ԳՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ

Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Քառասիրտ

Ձուտ հայկական անձնանուններ (ուշ նորակազմությունները նկատի չառնելով) քիչ ունենք՝ Արեգ, Արա, Արփի, Արմենակ, Հայկ, Գյուտ, Հրանտ, Աստղիկ, Եզնիկ, Գառնիկ, Ծովինար ելն: Հայոց անձնանունների մեծ մասը գալիս է իրանական, աստվածաշնչյան եւ հունահռոմեական միջավայրից՝ Արբակ, Արշակ, Արտավազդ, Համազասպ, Տիգրան, Տրդատ, Գոռ, Բաբկեն, Գուրգեն, Պապ, Նվեր, Դրաստամատ, Վարդան, Երվանդ, Զավեն, Վազգեն, Արտաշես, Արտավազդ, Արամազդ, Վահագն, Սուրեն, Պարույր, Վրույր, Շահեն, Վարուժան, Մերուժան, Սիիրան, Անահիտ, Աշխեն, Նվարդ, Փառանձեն, Ասպրամ, Հասմիկ, Անուշ, Հովհաննես, Աբրահամ, Իսահակ, Հակոբ, Սահակ, Հովսեփ, Մերոբ, Քերովբե, Մեղրակ, Սողոմոն, Մարիամ, Եղիշե, Գրիգոր, Գեորգ, Ղեւոնդ, Սիմոն, Աղեքսանդր (Ալեքսանդր), Անդրեաս, Մարտիրոս, Կիրակոս, Պողոս, Պետրոս, Դուկաս, Հեղինե ելն: Սա, իհարկե, ծագումնաբանական դասակարգում է, այսինքն երբ մենք անձնանունները դիտում ենք դրանց ստուգաբանության տեսանկյունից: Սակայն այս կատեգորիայի բառերը, ըստ էության, նշաններ են, որոնք՝ ինչպես ամեն մի նշան, տարբերակիչ հատկություն ունեն, առարկան կոչելու միջոց են: Հենց դա է պատճառը, որ անձնանունը ինչպիսի ծագում էլ ունենա, ինչ էլ սկզբնապես նշանակի, ստեղծվելուց հետո կորցնում է իր նախնական իմաստը եւ վերածվում մերկ սիմվոլի. անվան ստուգաբանական կողմը դառնում է երկրորդական եւ անկարելի՝ իհարկե, քննարկվող խնդրի առումով միայն: Առհասարակ անվանակոչության պրոցեսը (անունների առաջացման կանոնների մասին չէ խոսքը), ունի իր օրինաչափությունները, որոնցից առավել կարեւորներն են՝ 1) պատմական եւ հայտնի անձանց ու առասպելական անունների օգտագործումը (օրինակ՝ Տիգրան, Վարդան, Անդրանիկ, Վահագն, ելն), 2) դրական բնութագրումներ եւ «խոսուն» անուններ (ինչպես՝ Սիրուն, Գեղեցիկ, Երջանիկ, Աստվածատուր (Ասատուր), Պերճ, Կայծակ, Փայլակ, Ժիրայր, Բաջայր, Խաժակ, Մարգարիտ, Անգին, Հերիք, Բավական, Մեղմիկ,

Համեստ, Զնքուշ եւն), եւ 3) բացասական բնութագրումներ, որոնք միտված են հեռու պահելու նորածնին «չար աչքից» եւ դեւերից (ինչպէս՝ Վազգեն, որը ծագում է պահլավերեն Վազաղեն «գորտի նման, գորտի տեսք ունեցող, տգեղ» ձեւից): Վերջին սկզբունքով է կազմված նաեւ Ջրադաշտ մարգարեի անունը, որը նշանակում է «ծեր ուղտերի տեր»: Այս կանոնով հայկական օնոմաստիկոնի բնիկ շերտում, ինչքան ինձ հայտնի է, որեւէ օրինակ չի վկայված: Սակայն կարելի է արձանագրել այս սկզբունքի մի այլ դրսեւորում հայոց անվանացանկում. դա «մուսուլմանական» անունների օգտագործումն է՝ այն մտայնությամբ, որ դրանք, իբր, «չար աչքից» ու այլ փորձանքներից հեռու են պահելու երեխային: Մինչեւ վերջերս տարածում ունեցող Աթաբեկ, Ամիրխան, Ամիրբեկ, Բալաբեկ, Բյարամ, Խանչարբեկ, Ջալալ, Ջավադ, Գյուլբուղաղ, Մուրադ, Ջուլֆուկար, Ասլան, Իգիթ, Ջիվան, Ջհանգիր, Սարդար, Խաթուն, Խանում, Մուշկինագ, Խաթայի, Ֆաթմա, Դիլբար եւն անունները հենց այս տրամաբանությամբ են տրված:

Ազգային սեփական անձանվանական համակարգը յուրաքանչյուր հանրային ազգային մշակույթի բաղկացուցիչ մասն է կազմում: Իսկ ազգային են համարվում պատմամշակութային, կրոնական, քաղաքակրթական եւ, անգամ, աշխարհայացքային լիցք պարունակող անձնանունները: Այլ կերպ ասած, ազգային են միայն այն անձնանունները, որոնք արդեն իսկ սրբագործվել են տվյալ ժողովրդի պատմամշակութային ավանդությամբ՝ անկախ դրանց ծագման: Օրինակ՝ Արա, Տիգրան, Վարդան, Վռամշապուհ, Սահակ, Եզնիկ, Գրիգոր, Մուշեղ, Արիստակես, Աշոտ, Սմբատ, Շահամիր, Իսրայել, Ներսես, Անդրանիկ, Դրաստամատ, Նժդեհ, Սերոբ, Հայրիկ, Սարգիս, Հակոբ, Մարիամ, Անահիտ, Աստղիկ, Փառանձեմ անունները նախ եւ առաջ կապվում են Արա Գեղեցիկի, Տիգրան Մեծի, Վարդան Մամիկոնյանի, Վռամշապուհ արքայի, Սահակ Պարթեւի, Եզնիկ Կողբացու, Գրիգոր Լուսավորչի, Արիստակես կաթողիկոսի (նաեւ՝ Արիստակես Լաստիվերտցու), Մուշեղ Մամիկոնյանի, Աշոտ Երկաթի, Սմբատ Բագրատունու, Շահամիր Շահամիրյանի, Իսրայել Օրու, Ներսես Աշտարակեցու (նաեւ Ներսես Արքեպիսկոպոս Մելիք Թանգյանի), Անդրանիկ Ջորավարի, Դրաստամատ Կանայանի, Գարեգին Նժդեհի, Սերոբ Աղբյուրի, Խրիմյան Հայրիկի, Սբ. Սարգսի, Սբ. Հակոբի (նաեւ Հակոբ Մեղապարտի), Աստվածամոր, Անահիտ աստվածուհու, Աստղիկ դիցուհու, Փառանձեմ թագուհու կերպարների հետ: Դրանք այլեւ

սրբացված անուններ են՝ թեկուզ եւ դրանցից միայն Արան, Եզնիկը, Հայրիկը, Աստղիկն ու, թերեւս, Անդրանիկն են հայկական ծագման: Ընդհանրապէս անունները հաճախ կանոնիկ են դառնում այն կրող անձանց պատմական դերի շնորհիվ: Օրինակ, չի բացառվում, ասենք, որ Վիկտորը ժամանակի ընթացքում դառնա ազգային օնոմաստիկոնի մաս, որովհետեւ այն եղել է ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անունը:

Այսպիսով, հայկական անձնանունների համակարգ (օնոմաստիկոն) ասելով, պետք է ի նկատի ունենալ այն բոլոր անունները, որոնք ունեն պատմական հիմնավորում եւ վկայված են 5-20-րդ դարի սկիզբը ընդգրկող ժամանակաշրջանի հայ իրականության մեջ: Ճիշտ է, դեռեւս 19-րդ դարի վերջից ի հայտ են գալիս հնարովի անուններ (ինչպէս՝ Շաքե, Կարինե, Արմինե, Լուսինե, եւլն, որոնք այսօր էլ օգտագործվում են), սակայն դրանք որակ չեն կազմել եւ շոշափելի տարածում չեն ունեցել: Հայկական ազգային անձնանունների կորպուսի մեջ պետք է ներառել նաեւ հիմնականում ազգային ազատագրական գործիչների՝ ո (դասական ուղղագրությամբ՝ օ) եւ ե (դասական ուղղագրությամբ՝ է) վերջավորությամբ կրճատ անունները՝ ինչպէս Դ-րո (Դրաստամատ Կամայան), Արաբո, Սոսե (քրդերեն Սոսըն = հայ. Սուսան, իգական անվան կրճատ ձեւը) եւլն: Նման անձնանունները պայմանականորեն ազգային կարելի է համարել, եթե դրանք հիմնավորվում են կոնկրետ պատմական նախակերպարներով (ինչպէս նշված անունները): Մեզանում այսօր շատ տարածված ո-ով անունները (հիմնականում շումերների շրջանում՝ Բողո, Արամո, Հայկո եւլն), ըստ էության, նորամուծություն են եւ չեն համապատասխանում մեր ավանդությանը: Հարկ է հիշել, որ նշված ձեւույթները քրդերենի կոչական հոլովի վերջավորություններ են՝ ո-ն արական սեռի, ե-ն իգականի համար եւ խորթ են հայերենի բառակազմական կանոններին: Մանավանդ, երբ իգական սեռի անունը ստանում է արականի վերջավորություն (ինչպէս, օրինակ՝ Սիրուշոն, որն օրենքով պետք է լիներ Սիրուշե): Բացառություն կարելի է անել, թերեւս, Լորկե իգական անվան կապակցությամբ, որը թեւ քրդերեն է (քրդ. լորկ «լոր» բառի կոչականի իգական ձեւը), բայց վկայված է հայերեն ժողովրդական երգերում եւ ունի ազգային լիցք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԳՈՒՄԻ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԿԱՏՎՈՒՄԸ

Վստահությամբ կարելի է ասել, որ աշխարհում չկա մի ժողովուրդ, որն այնքան հակում ունենա օտար անունների հանդեպ, որքան հայերը: Դա, կարծես, ի սկզբանե հատուկ է եղել մեր ժողովրդին, քեկուզ հենց այն պատճառով, որ, ինչպես նշվեց, հայոց անձնանունների լոկ չնչին մասն է բնիկ հայկական ծագման: Հայաստանի խորհրդայնացումից հետո հայերը խորհրդային ժողովուրդների մեջ առաջին տեղն էին գրավում, այսպես կոչված, «հեղափոխական» անուններով՝ Մելա (ՄարքսէնգելսէնիմՍտալին), Մելսիդա, Լենտրոշ (ԼենինՏրոցկիՇահումյան), Պեռլայիտ (), Լեկդար («Լսիր, երեխա, կոմունիստ դարձիր»), Դոնարա (), Իլիչ, Սերգո (Սերգո Օրջոնիկիձե), Լավրենտի (Լավրենտի Բերիա), Կիմ եւ Կիմա (), Գերտրուդա (), Վիլեն, (Վլադիմիր Իլիչ Լենին), Մառլեն (Մառլեն), Կառլեն, Հոկտեմբեր, Օկտրյաբրինա եւլն: Ռուս եւ այլազգի գրողների, գիտնականների ու քաղաքական գործիչների անունները խորհրդային տարիներին՝ մինչեւ հետպատերազմյան առաջին տասնամյակները հայերի շրջանում չափազանց հարգի էին՝ Պուշկին, Լեռնոնտ (Լեռնոնտով), Չապաեւ, Կատաեւ, Ֆրունզե (Ֆրունզիկ), Ռոշ (այսինքն՝ Ռոշիլով), Բերիա, Վավիլով, Բլյուխեր, Մոլոտով, Կամո, Ջոնոիդ (կամ ուղղակի Ջոն), Նապոլեոն, Ժուլյեռն, Գարվին, Վանցեռտ, Յուզար (Յուրի Գագարին), Գայդար եւլն: Լայն տարածում էր ստացել նաեւ ծնողների անունների առաջին կամ վերջին վանկերի գումարով ստեղծված կեղծ անունները, օրինակ՝ Մելվար (Մելինե+Վարդան), Մարիել (Մարինա + Սամվել) եւլն:

1950-ականներին «հեղափոխական» անունները աստիճանաբար իրենց տեղը զիջում են նոր օտարաբանությունների: Վոյնիչի «Բոռի» հայերեն հրատարակությունից հետո՝ Արթուրները ողողում են Հայաստանը այն աստիճան, որ նույնիսկ այսօր Արթուր անունը հայերի շրջանում գերակշռում է անգլիալեզու հանրություններում այդ անվան շրջանառության ծավալներին (վկայված են նաեւ Իխտիանդր անունը «Երկկենցաղ մարդը» ֆիլմից, Աելիտան՝ Ալեքսեյ Տոլստոյի նույնանուն վեպից): Նույնը վերաբերում է նաեւ Համլետ, Օֆելյա, Էդվարդ, անգամ Դեզդեմոնա անուններին: Իհարկե, էլ չենք խոսում Վոլոդյա, Մաշա, Շուրա, Շուրիկ, Յուրիկ, Սերժ (Սերյոժա), Ժոռա, Ռոբերտ, Ռոմիկ, Ալբերտ, Վերասնդիկ, Կնյազ, Ժուդեկս, Ժուդիկ, Ռուդիկ, Ռիմա, Լենա, Սվետա, Մարուսյա, Լուսյա, Անժիկ, Ռոզա, Ջուլիկ, Ջոյա, Մանյա (Մանիկ), Մելադա, Մելանյա, Նելլի, Նորա,

Նինա, Ժենյա, Ֆրիդա, Ժաննա, Աիդա, Էլմիրա, Էլինա, Էլվիրա, Էռնա, Ֆենյա, Դիանա, Ադելաիդա, Ադելինա անձնանունների մասին: Արցախում եւ ընդհանրապես հայոց Արեւելից Կողմանց տարածքներում, հիշյալներից գատ, նշանային եւ դառնում Արկադի, Սլավա (Սլավիկ), Վադիմ (Վադիկ), Անատոլի (Տոլիկ), Վիտալի(կ), Վալերի(կ), Ռադիկ եւ Վյաչեսլավ անձնանունները: Իսկ վրացահայերի մեջ այս բոլորին գումարվում է նաեւ վրացական անունների շարքը՝ Վախթանգ, Նուգար, Էլգուջա, Նիկո, Թենգիզ, Շավլա, Նինո, Նանի, Նաթելլա, Գարեջան եւլն:

Սակայն հենց 1950-ականների վերջից, երբ լույս է տեսնում Րաֆֆու երկերի լիակատար ժողովածուի առաջին հրատարակությունը, ազգային անունները սկսում են լայն շրջանառության մեջ մտնել: Մանավանդ 1965-ի ազգային զարթոնքի եւ այդ տարիներին լույս տեսած մի շարք պատմավեպերի ազդեցության ներքո այս երեւոյթը սկսում է նոր թափ հավաքել: Ստեղծվում են նույնիսկ արհեստական ազգային անուններ՝ Նարեկ, Արծրուն, Գնուն, Նաիրա (Նարա), Նաիրի, Անի. իգական անունների մեջ տեսանելի են դառնում Գոհարը, Չարան (Չարուհի) եւ Տաթևիկը՝ երգչուհիներ Գոհար Գասպարյանի, Չարուհի Դոլոխանյանի եւ Տաթևիկ Սազանդարյանի ժողովրդականության շնորհիվ, նաեւ՝ փոքր ինչ ուշ Լիլիթը՝ Իսահակյանի համանուն պոեմից:

Այսուհանդերձ 1970-ական թվականներից օտար անունները վերստին սկսում են գերակշիռ դիրք գրավել (մինչ այդ էլ, իհարկե, դրանք ասպարեզը լիովին չէին զիջել): Կանանց անունների մեջ հատկապես սկսում են աչքի ընկնել Լիանան եւ Մարինան: Անգամ Հայաստանի անկախացումը դրությունը չի փոխում: Ընդհակառակը, օտարամետ անվանակոչությունը մեզանում այսօր, կարծես, նորից սկսում է մոդայիկ դառնալ: Այնպիսի օտարոտի եւ խորթ անուններ, ինչպիսիք Էլեն, Յանա, Մոնիկա, Մարիանա, Մելինե, Քրիստիկ (Քրիստինե), Սիլենա, Էրիկ, Ալեն, Հենրի, Մայքլ, Վերոնիկա (գրում են ու-ով՝ Վեռոնիկա), Նիկա եւլն այլեւս կայուն տեղ են զբաղեցնում մեր նորօրյա անվանացանկում:

ՉՅԻ ՅՅՅԻ áááóÃŨóŸÁ Çñ ՅՅՅՆՅŨó Û»Ç

Սակայն անվանակոչությունը հայ ժողովրդի որեւէ հատվածում երբեւէ այնպիսի ողբալի վիճակում չի եղել, ինչպես այսօր իրանահայ համայնքում: Հայտնի փաստ է, որ իրանահայությունը՝ որպես

Հայաստանին ամենամոտ համայնքը՝ մի կողմ թողնելով նրա դերը հայ հասարակական-քաղաքական մտքի, հայ մշակույթի զարգացման ասպարեզում, մշտապես աչքի է ընկել ծայրաստիճան պահպանողականությամբ, ազգային գաղափարներին ու քրիստոնեական արժեքներին իր անմնացորդ նվիրվածությամբ: Դա վերաբերում է եւ ազգային անվանացանկին: Ընդհուպ 1950-ական թվականների սկիզբը իրանահայոց անձնանունների մեջ օտար միավորները հազվագյուտ երեւոյթ էին: Ազգային անունների ֆոնդը արտահայտվում էր իր ամբողջ ընդգրկումով՝ իհարկե աստվածաշնչյան անունների գերակայությամբ:

1950-ական թվականներից աստիճանաբար սկսում են ի հայտ գալ օտարաբանությունների առաջին նշույլները այս համայնքում: Այդ տարիներին ծնված երեխաների մեջ առանձնանում են Ժոզեֆ, Ժորժիկ, Ջեֆերսոն, Վալոդ, Հենրիկ, Սերժիկ, Սերժ, Էդիկ, Էդո, Էդվարդ, Իգնատիկ, Ալիս, Քլարիս, Անժել, Ժենիկ, Ժուլեթ, Ժանեթ, Օմիկ, Օդեթ, Կատուշ (այսինքն՝ Կատյուշա), Ալենուշ (այսինքն՝ Ալյոնուշկա), Ժիլբերտ (որպես իգական անուն!), Լիլդա, Լիդա անձնանունները: Լայն տարածում է գտնում նաեւ Վիզեն անձնանունը՝ պարսկահայ երգիչ Վիզեն Տերտերյանի ժողովրդականության հետեւանքով: Վերջինս ծագում է լատինական Vincent-ից եւ մինչ այդ բնորոշ է եղել ավելի շուտ կաթոլիկ հայերին: Իսկ «Քամուց քվածները» հայտնի ֆիլմի ցուցադրումից հետո իգական անունների շարքում կտրուկ աճում է Սքառլեթ անվան շրջանառությունը: Այս երեւոյթը բուռն զարգացում է ապրում հետագա տարիներին՝ այնքանով, որ ազգային անվացանկն այսօր իսպառ վերանալու վրա է: Ընդ որում, եթե առաջ օտար անունները զոնե այս կամ այն կերպ ամբողջական տարբերակով էին օգտագործվում (երբեմն փաղաքշական ածանցներով՝ Ժորժիկ, Հենրիկ, Ժենիկ եւլն), այժմ արդեն օտար անունների գլխավորապես կրճատ ձեւերն են գերակայություն ստացել՝ միտումնավոր փոփոխություններով եւ պատահական հավելումներով: Օրինակ՝ Ռոնի, Ռոբի, Միքիա, Լուդիկ, Ադրիկ, Արվին, Ալբա, Վալդեր, Ռուդվիգ, Ռոդրիկ, Առլեն, Ալեքս, Ալեն, Անիթա, Լինետ, Ամանդա, Իմելրա, Ռամոնա, Ռամելլա (եւ Ռոմելլա), Ջեսի (Ջեսիքա), Մարի (ո-ով՝ Մառի), Նինելլի, Սինելլի, Բրայան, Փարվիկ, Փանվել (ոչ Մանվել), Էրիկ, Էլին, Սարբեյ (նաեւ Սարբել), Ռենիա, Իգետ եւլն: Հանդիպում են երբեմն այնպիսի արտառոց օրինակներ, ինչպիսիք Վեսթինգհաուս, Վայթհաուս, Վանասիս անունները: Վկայված են

նույնիսկ Յուրիկ եւ Լարիսա անունները: Իսկ ընդհանրապես զգալի տոկոս են կազմում հնարովի՝ կամայական հնչյունական կոմբինացիաների վրա կերտված կազմությունները: Ծնողները, թվում է, ձգտում են իրենց երեխաներին տալ այնպիսի անուններ, որ մինչ այդ որեւէ տեղ չեն հանդիպել: Ի՞նչ արժեն, օրինակ, Ադեն, Շիդա, Սաշե, Անաշե, Արին, Թեդի, Ռոդին, Արադա, Արիգա, Ազիթա, Սինե, Օնայնա, Շարիս, Սյունե, Ալե, Արմի, Արսիս, Ռադնի, Ադրին, Թեդիս, Բոբի, Դոդի, Էդին, Հիլմա, Սերվին, Էմիլ, Գիլդա, Հարբիկ, Թիեդրա, Բուրե, Նարվիկ, Սոնի, Ադիկ, Ադեն, Նորա-Նարբիկ եւլն անունները, որոնք, թող ներվի ասել, ավելի շուտ կենդանիների մականուն են հիշեցնում, քան բանական էակի անուն ու, լավագույն դեպքում, կարող են համեմատվել երեւանյան տաքսիների ֆիրմային անվանումների հետ: Իսկ հազվագյուտ շրջանառություն ունեցող հատուկներ, այսպես կոչված, «հայրենասիրական» անունները եւս՝ մի քանի Սիերից, Սասունից, Դրոյից, Կարենից, Անուշից, Դալարից ու Բյուրեղից գատ, կրկին արտառոց ձեւով են ի հայտ գալիս: Դրանք մեծ մասամբ տեղանուններ են, գետանուններ կամ պատմական ազգանուններ (երբեմն աղավաղված ձեւով), ինչպես՝ Էջմին (Էջմիածին), Վարագա (Վարագ տեղանվան սեռական հոլովի ձեւը), Օրբել (Օրբելյան իշխանական տան անունից), նաեւ՝ Դվին, Փարպի, Օշական, Թալին, Գորիս, Սեւան եւ Սեւանա (սեռական ձեւը), Արփա, Ուրֆա, Բիայնա, Գառնի, Գեղարդ, Խանասոր եւլն: «Ազգային» անունների մեջ հանդիպում են Արութին (Հարություն անվան թիֆլիսյան արտասանությունը, բայց չկա ոչ մի նորմալ Հարություն!), Նորբերդ, Հայբերդ, Արինբերդ, Արգիշտի, Սենուա, Արքա, Քայլառ, Դուրեկ՝ ընդհանուր առմամբ հնարովի ու ոչ կանոնիկ անձնանունները: Զգալի թիվ են կազմում նաեւ ո-ով կրճատ անունները՝ Յարո, Փայլո, Լեռնո, Սիրո: Վերջին 3-4 տարում Թեհրանի «Ալիք» թերթի հավելվածում տպված իրանահայ գերագանցիկ աշակերտների մոտ 6-7 հարյուր անուն ընդգրկող ցանկերում հիմնականում իշխում են վերոհիշյալ անձնանունները: Չի հանդիպում ո՛չ մի, ընդգծեմ՝ ո՛չ մի Վարդան, Վաղարշակ, Վարագրատ, Վահրամ, Վարդգես, Վաղինակ, Վահան, Գուրգեն, Բարկեն, Արշակ, Հովսեփ, Հրանտ, Հակոբ, Հովհաննես (զոնե Հովիկ ձեւով լինել), Հասմիկ, Գոհար, Աշխեն, Անահիտ, Աստղիկ, Շուշան, Նվարդ, Աննա, Փառանձեմ... Հայ ազգային ազատագրական շարժման ակունքների մոտ կանգնած իրանահայության մատաղ սերնդի անձնանունների շարքում չի գրանցված ո՛չ մի Անդրանիկ, ո՛չ

մի Սերոբ, ո՛չ մի Գետրոգ: Հայ պետականության խորհրդանիշ Տիգրան Մեծի անվան մի օրինակ էլ չենք գտնում այդ ցուցակներում: Բացակայում են Արա (Արայիկ ձեռով երկու վկայություն կա), Արամ եւ, անգամ, ՀԱՅԿ անունները: Հիրավի, աղետալի վիճակ է: Համայնքում իշխող մտայնությունն այն է, որ, իբր, հայրերի ու պապերի անունները իրենց դարն արդեն ապրել են, եւ որ նոր ժամանակները պահանջում են անվանական նոր համակարգ: Բայց իրականում ազգային անունները երբեք չեն հնանում. անձնանունը, զինու պես, որքան հին է, այնքան մեծ է դրա արժեքային լիցքը եւ ազնվական ոգին: Իրականում հայ մարդը երեխայի անունը որոշելիս, նախ եւ առաջ ի նկատի է առնում դրա արտասանության դյուրությունը օտարների կողմից, իրանահայ համայնքի դեպքում, իհարկե, ամերիկյան միջավայրի համար: Այսպիսով, անունը ինքնըստինքյան ձեռք է բերում աշխարհայացքային բնույթ եւ դառնում մարդու ճակատագրի կողմնորոշիչ: Նման անունները, ըստ էության, կանխորոշիչ դեր են խաղում դրանց կրողների համար, որոնք, կարծես, ճակատագրով դատապարտվում են ապրել ու մեռնել օտար միջավայրում եւ ոչ թե հարագատ համայնքում կամ հայրենիքում: Խնդիրը, անգամ, ազգային անունների պարտադրության, եւ օտարների ի սպառ մերժման մեջ չէ. ի վերջո ներկայիս գլոբալիզացիայի պայմաններում յուրաքանչյուրն իրավունք ունի բանեցնելու իր սեփական ճաշակն ու հակումները՝ թեկուզ իր երեխայի անվանակոչության դեպքում: Խոսքը նախ եւ առաջ ԼԻԱՐԺԵԶ անունների մասին է: «Ալիքի» հրատարակած ցուցակներում ինձ սարսափեցրել է ոչ թե ազգային անունների բացակայությունը, այլ որ գեղեցկատես մանուկների նկարների ներքո՝ առանձին բացառություններից զատ, ընդհանրապես ԱՆՈՒՆ չկա: Հնչյունական քմահաճ կոմբինացիաներով հնարովի կազմությունները չեն կարող մարդու անուն լինել: Ակամայից կուզենայի դիմել այդ երեխաների ծնողներին: Հայրենակիցներ, հարզեք ձեր զավակներին: Որպես մեր ժողովրդի ապագա, նրանք արժանի են լիարժեք անուններ կրելու: Եթե Ձեր երեխան երբեւէ հայտնվի Ամերիկայում կամ ցանկանա դառնալ շոունեն, հավատացեք, նա կգտնի իր համար հարմար մականուն կամ «կլիչկա», ինչպես Հայաստանում են ասում... Թող նա կրի լիարժեք եւ հայ մարդուն արժանի անուն:

ԱՅԻՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ

Անձնանունները, ինչպես ասվեց, կազմում են, նախ եւ առաջ, նշանային համակարգ եւ, ըստ էության, տեղայնական բնույթ ունեն (այն է՝ ազգային, էթնիկ, ցեղական, մույնիսկ կրոնական, դավանական եւ այլն): Այլ կերպ ասած, անձնանունները յուրաքանչյուր հանրային բնորոշիչ կողերն են: Նույնիսկ այնպիսի համաշխարհային մի ժողովուրդ, ինչպիսիք հրեաներն են, հետետողականորեն պահպանում են իրենց ավանդույթը՝ կապված անվանակոչության հետ: Ինչ էթնիկ միջավայրում էլ նրանք գտնվեն, ինչ լեզվով էլ խոսեն, հրեաներին կարելի է տարբերակել նրանց անուններով (Աբրահամ, Մովսես, Իսահակ, Հովսեփ, Մողոմոն, Գավիթ, Հակոբ, Ահարոն, Իսրայել, Սառա, Ռաբել, Ռեբեկա, Մուլամիթ եւլն անունների արեւելյան կամ արեւմտյան տարբերակներով): Հետեւաբար, մարդու անունը ազգային (կամ էթնիկ, կրոնական, եւլն) ինքնության ամենաառաջնային ցուցանիշն է: Անգամ լեզուն այս տեսանկյունից դառնում է երկրորդական: Անձնանունները, փաստորեն, հանդես են գալիս որպես ազգային արժեքային համակարգի անքակտելի տարրերից մեկը:

Անվան եւ անվանյալի միջեւ գոյություն ունեցող սերտ դիալեկտիկական կապը նկատել են դեռեւս հին մտածողները: Անվան դետերմինիզմը մարդու ճակատագրում հնուց ի վեր եղել է իմաստունների քննարկման առարկա: Բայց, անկախ դրանից, ընդունում ենք այս դրույթը, թե՛ ոչ, կասկածից վեր է, որ հնչյունական սիմվոլիզմի հիման վրա հորինված անուններ կամ արտառոց փառաքչական մականուններ կրող մարդիկ ակամայից դառնում են իրենց անվան գերին: Անունը, հիրավի, երբեմն որոշիչ նշանակություն է ունենում մարդու ճակատագրում:

Մի հանգամանք եւս: Ըստ մեզանում իշխող մտայնության, հայրենասիրությունը հիմնականում ինչ-որ վեհ արարքների արտահայտություն է: Իրականության մեջ, սակայն, հայրենիքի, սեփական ժողովրդի հանդեպ սերը պարզապես նշանակում է նվիրում ազգային ավանդույթներին, որից էլ, բնականաբար, բխում են մյուս, այսպես ասած, վեհ արարքները (ինքնագոհություն մարտի դաշտում, հերոսություն, եւլն): Հայրենասիրական ֆրագեոլոգիան դեռեւս հայրենասիրություն չէ բնավ: Թուրքին հայհոյելը, ասպիլքսանչորսյան երթին մասնակցելն ու ֆիդայական երգեր երգելն այն դեպքում, երբ մարդու, երեխայի անունը Ադրիան է, Էլվիս, Բրայան, Քեյին կամ, ավելի վատ, Բորի, Ռոնի, Գոդի ու Էմիլի, ծաղր ու ծանակ է հիշեցնում եւ ոչ հայրենասիրություն: Երեխայի անվանակոչությունը այն փորձաքարն է, որով որոշվում է, թե տվյալ մարդը ինչ աշխարհայացք է դավանում, ինչ ասպագա է ծրագրել իր զավակի համար: Հայրենասիրության այդպիսի մի

փորձաքար էր, օրինակ, խորհրդային տարիներին Հայաստանում երեխային հայկական դպրոց ուղարկելը: Օրն ի բուն խորհրդային կարգերը պախարակող ու հայրենասիրության մասին ճամարտակող շատերը, այդ թվում նույնիսկ գրողներ ու հայերենի մասնագետներ (որոնց համար հայոց լեզուն նաեւ ապրուստի միջոց էր), իրենց զավակներին ռուսական կրթություն էին տալիս: Այն տարիներին դա իսկապես մարդու նշանային վարքի դրսևորում էր:

Իհարկե, քավ լիցի, ես հեռու եմ հախումն մեղադրելու բոլոր օտար անուններ կրող հայ երեխաների ծնողներին ապագային վարքի կամ հայրենասիրության պակասի մեջ. հասկանալի է, որ այս երեւոյթը մեծամասամբ տուրք է օրվա մոդային, տիրող ընդհանուր հոսանքին, եթե կուզեք՝ գաղափարական վակուումի արտահայտություն է, ըստ էության, հաճախ՝ անգիտության արդյունք նաեւ: Սակայն դրանով զնահատականը չի կարող փոխվել. երեւոյթն արդեն իսկ սպառնում է դառնալ հայկական մենտալիտետի կայուն էլեմենտ, որն առաջիկայում կարող է լրջորեն սասանել մեր ինքնության հիմքերը:

Միով բանիվ, անվանակոչության խնդիրն այսօր դարձել է հրատապ ազգային հիմնահարցերից մեկը, որը պահանջում է լուրջ՝ ինչպես պետական, այնպես էլ հասարակական մոտեցում: Ըստ երեւոյթին, անհրաժեշտ է հայկական ազգային անունների համապարփակ մի բառարան, որը պետք է պարտադիր կերպով կիրարկվի Հայաստանում եւ սփյուռքյան համայնքների ազգային իշխանությունների ու թեմական խորհուրդների համար ծառայի որպես ուղեցույց անունների ընտրության գործընթացում: Այս խնդրում զգալի դեր կարող են խաղալ նաեւ մեր եկեղեցին եւ հոգեւոր դասը:

Այնուհանդերձ, բնական է, որ դիրեկտիվ միջոցներով այս ոլորտում հնարավոր չէ արմատական փոփոխություն ակնկալել. պետք է փոխել անձանվան հանդեպ մեզանում այսօր իշխող աշխարհայացքային ընկալումները: Ժամանակն է, կարծում եմ, որ ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունը քննարկման դնի բուհերի համար «Հայ անվանագիտության ներածություն» պարտադիր դասընթացի (20 ժամ, մեկ կիսամյակ) հարցը եւ հայտարարի մրցույթ համապատասխան դասագրքի (ձեռնարկի) կազմման համար: Նման ձեռնարկը անտարակույս օգտակար կարող է լինել նաեւ սփյուռքյան համայնքների համար:

ՊԱՏՐԱ՞ՍԵ ԵՆՔ ԳԱՇՏՎԵԼՈՒ ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԵՏ



Եթե կարող ենք վիճարկել այն

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մերի պայմանագրով Հայաստանի Հանրապետության տարածքը պետք է կազմեր, ընդհանուր առմամբ, 162.000 քառակուսի կիլոմետր: Սակայն հետագայում կնքված Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերի արդյունքում այդ տարածքը կրճատվեց մինչեւ 30 հազար քառ. կիլոմետրի: Մենք արդյոք պատրաստ ենք հաշտվելու Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերի հետ: Այս խնդրի, նշված պայմանագրերի վիճարկման հնարավորությունների եւ անհետաձգելի անհրաժեշտության շուրջ է մեր հարցազրույցը փաստաբան, ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ ՀԱՅԿ ԱԼՈՒՄՅԱՆԻ հետ:

- Որքանով էին իրավական Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերը, դրանց դրույթները համապատասխանում էին միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին: Ներկայումս արդյոք կա՞ն այդ պայմանագրերը վիճարկելու իրավական հիմքեր, վիճարկման մեխանիզմներ:

- Այս եւ ոչ միայն այս հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է ձեւավորել մի քանի պատմաբաններից եւ միջազգային

իրավունքի ոլորտում մասնագիտացած ու մասնագիտացող իրավաբաններից բաղկացած աշխատանքային խումբ: Այսինքն՝ մի խումբ, որը կկարողանա խորապես ուսումնասիրել առկա բոլոր խնդիրները, ինչից հետո եզրակացությունները կներկայացնի ՀՀ իշխանություններին: Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերը վիճարկելու համար, առանց ուշացնելու, պետք է ձեռնամուխ լինել այդպիսի մի միասնական աշխատանքի: Այն իր մեջ պետք է ներառի ոչ միայն հիշյալ պայմանագրերի բոլոր խոցելի կետերի վերհանումը եւ դրանց անվավերության հիմնավորումները, այլեւ այն դատավարական մեխանիզմների մշակումը, որոնց միջոցով հնարավոր կլինի միջազգային ատյաններում առավել արդյունավետ կերպով վիճարկել այդ պայմանագրերը: Այնուամենայնիվ, անդրադառնամ ձեր այն հարցին, թե որոնք են այդ պայմանագրերի վիճարկման հիմքերը: Նախ՝ Մոսկվայի պայմանագրի անվավերականության մասին:

1921-ի մարտի 16-ին Մոսկվայում Ռուսաստանի եւ Թուրքիայի կառավարությունների միջեւ կնքվեց պայմանագիր, որով իրավունքներ ու պարտականություններ էին սահմանվում ոչ միայն պայմանավորվող երկու պետությունների, այլեւ այդ պայմանագրի կողմ չհանդիսացող Հայաստանի եւ Անդրկովկասի մյուս երկու պետությունների համար: Մասնավորապես այդ պայմանագրով Թուրքիային եւ Ադրբեջանին էին բռնակցվում Հայաստանի մի շարք տարածքներ: Մինչդեռ, իրավունքի հանրաճանաչ սկզբունք է, որ պետությունների միջեւ կնքված որեւէ պայմանագիր չի կարող իրավունքներ եւ պարտականություններ ստեղծել այդ պայմանագրի կողմ չհանդիսացող պետության համար: Հետեւաբար Մոսկվայի պայմանագիրը չի կարող որեւէ իրավունք ստեղծել Թուրքիայի կամ Ադրբեջանի համար այն մասով, որը վերաբերում է հայկական հողերին, եւ, միաժամանակ, չի կարող պարտավորեցնել Հայաստանին՝ հաշտվելու այդ հողերի կորստի հետ:

Մոսկվայի պայմանագրի անվավերականությունը գիտակցում էին նաեւ պայմանավորվող կողմերը: Այդ իսկ պատճառով, Թուրքիայի պնդմամբ, Ռուսաստանը պայմանագրի 15-րդ հոդվածով իր վրա պարտավորություն է վերցրել «... Անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ դիմել քայլերի, որպեսզի այդ հանրապետությունների կողմից Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերում անպատճառ ճանաչվեն սույն պայմանագրի այն հոդվածները, որոնք վերաբերում են իրենց»:

Պայմանագրի մեջբերված այս դրույթը վկայում է երկու չափազանց կարեւոր հանգամանքի մասին: Նախ՝ Թուրքիան եւ Ռուսաստանը փաստորեն ընդունում էին, որ Մոսկվայի պայմանագիրն անվավեր է, քանի դեռ դրան չեն միացել այն պետությունները, ում այդ պայմանագիրն անմիջականորեն վերաբերում է, եւ երկրորդը, որ Ռուսաստանը պայմանագրի կնքման պահին ուներ բավարար լծակներ՝ ստիպելու Հայաստանին, որպեսզի վերջինս ընդունի Մոսկվայի պայմանագիրը: Երկրորդ հանգամանքը կարեւոր է հատկապես Կարսի պայմանագրի իրավական զնահատականի համար: Այսպիսով, Մոսկվայի պայմանագիրը, առանց Հայաստանի համաձայնության, անվավեր է բոլոր այն դրույթների առումով, որոնք վերաբերում են Հայաստանին:

- Ռուսաստանը մի՞թե չէր գիտակցում դա:

- Գիտակցում էր եւ դրա համար էլ կատարեց Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածով իր պարտավորությունը՝ Հայաստանին ստիպեց կնքել Թուրքիայի հետ Կարսի պայմանագիրը, որով Հայաստանի իշխանությունները ճանաչեցին Մոսկվայի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող հոդվածները:

- Անդրադառնանք Կարսի պայմանագրին. հնարավոր՞ է հիմնավորել դրա անվավերականությունը:

- 1921-ի հոկտեմբերի 13-ին Կարսում, Ռուսաստանի մասնակցությամբ կնքվեց այդ պայմանագիրը Անդրկովկասյան հանրապետությունների եւ Թուրքիայի միջեւ: Միջազգային իրավունքը վավերական է համարում այն պայմանագրերը, որոնք կնքվել են միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, այսինքն՝ պահպանվել են պայմանագիրը կնքող կողմերին, նրանց կամքի արտահայտմանը, պայմանագրի առարկային եւ կնքման ձեւին վերաբերող իրավական պահանջները: Այլ պահանջների համաձայն, պայմանագիրն անվավեր է, եթե կնքվել է կողմերից մեկի կամ նրա ներկայացուցչի նկատմամբ հարկադրանքի ազդեցության տակ: Կարսի պայմանագրի 2-րդ հոդվածում հռչակված է հենց այդ սկզբունքը՝ «Պայմանավորվող կողմերը համաձայնվում են չճանաչել ոչ մի հաշտության պայմանագիր կամ միջազգային որեւէ այլ ակտ, եթե կողմերից մեկին ուժով են հարկադրել այն ընդունել... »:

- Արդյոք կարելի՞ է համարել, որ Կարսի պայմանագիրը Հայաստանի ժողովրդի ընտրած լեգիտիմ իշխանության կողմից, սեփական կամքով, առանց հարկադրանքի կնքված պայմանագիր է:

- Եթե Հայաստանի իշխանություններն ինքնուրույն լինեին իրենց որոշումներում, ապա Ռուսաստանը չէր կարող Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածում պարտավորվել «...Անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ դիմել քայլերի, որպեսզի այդ հանրապետությունների կողմից Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերում անպատճառ ճանաչվեն սույն Պայմանագրի այն հոդվածները, որոնք վերաբերում են իրենց»: Այն, որ Ռուսաստանը նշված պարտավորությունն էր ստանձնել, վկայում է այն մասին, որ նա բավարար լծակներ ուներ՝ Հայաստանի իշխանություններին այդ պայմանագրերը թելադրելու համար: Թուրքիան, իր հերթին, համոզված էր, որ Ռուսաստանն ունի այդ լծակները եւ գործադրելու է դրանք, հակառակ դեպքում հիմք չէր ընդունի Ռուսաստանի այդ պարտավորությունը:

Կարսի պայմանագիրը Հայաստանի կողմից ստորագրել են Արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ասքանազ Մռավյանը եւ Ներքին գործերի ժողովրդական կոմիսար Պողոս Մակինցյանը: Հայաստանի ղեկավարներն էին Վ. Լենինի ցուցումով եւ Ռ.Կ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ Սովետական Հայաստան ուղարկված Ա. Մյասնիկյանը եւ Ս. Լուկաշինը: Հասկանալի է, որ Խորհրդային Հայաստանի քաղաքականությունը ամբողջությամբ կախված էր Մոսկվայից եւ Հայաստանի իշխանությունները չէին կարող չստորագրել Կարսի պայմանագիրը: Այսպիսով, Հայաստանը որպես պայմանագրի մասնակից, զուրկ է եղել իր իրական կամքն արտահայտելու հնարավորությունից եւ Կարսի պայմանագրի կողմերի միջեւ իրականում որեւէ համաձայնություն ձեռք չի բերվել: Միջազգային իրավունքի տեսանկյունից նման պայմանագիրն անվավեր է ի սկզբանե:

- *Միջազգային իրավունքի ուրիշ հ^օնչ սկզբունքներ են խախտվել Կարսի պայմանագրի կնքմամբ:*

- Պակաս կարեւոր չէ նաեւ այն, որ Կարսի պայմանագիրը կնքվել է իրավահավասարության սկզբունքի խախտմամբ: Միջազգային պայմանագիրը համարվում է իրավահավասար, եթե կնքվել է կողմերի ինքնիշխանության, կամավորության եւ նրանց ներքին գործերին

չմիջամտելու սկզբունքների պահպանմամբ: Մինչդեռ վերը նշված փաստերը վկայում են, որ Կարսի պայմանագրի կնքման ժամանակ խոսք լինել չէր կարող իրավահավասարության մասին:

Խախտվել է նաև ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերի արդյունքում Թուրքիային եւ Ադրբեջանին են անցել մի շարք այնպիսի տարածքներ, որոնք ոչ միայն պատմականորեն հայկական են, այլև պայմանագրի կնքման պահին դեռ հայաբնակ էին: Այսպիսով, պայմանագրի կողմերը (իսկ այդ պայմանագրերի կողմեր, ինչպես արդեն հասկանալի է, պետք է համարել միայն Թուրքիային եւ Ռուսաստանին) բացահայտ կերպով խախտել են նաև ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Մինչդեռ հենց Մոսկվայի պայմանագրի ներածական մասում կողմերը հռչակել են, որ հիմք են ընդունում, մասնավորապես, ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը: Նույն սկզբունքը հռչակված է նաև Կարսի պայմանագրի ներածական մասում: Սա նշանակում է, որ նշված պայմանագրերը հակասում են միջազգային իրավունքի այն սկզբունքներին, որոնց վրա հիմնվել են պայմանավորվող կողմերը: Սա եւս մեկ անվիճելի հիմք է պնդելու, որ Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերն անվավեր են:

- Հնարավոր է հիշյալ պայմանագրերի վիճարկումը, երբ արդեն ավելի քան ութ տասնամյակ է անցել:

- Միջազգային պայմանագրի (հատկապես այնպիսի պայմանագրի, որով սահմանվում են պետությունների սահմանները) վիճարկումը ժամանակի ընթացքում անկասկած գնալով դժվարանում է: Իրավաբան-միջազգայնագետների շրջանում ընդունված է այն տեսակետը, որ պատմական իրավունքների վերականգնման հարցին պետք է վերաբերվել շատ զգույշ. խոսք կարող է գնալ այնպիսի խախտումների վերացման մասին, որոնք տեղի են ունեցել ոչ այնքան վաղուց՝ 1-2 սերնդի կյանքի ընթացքում:

- Իսկ կա՞ն հակաիրավական միջազգային պայմանագրերի հաջողված վիճարկման եւ իրավունքների վերականգնման օրինակներ:

- Բռնությամբ պարտադրված, անիրավահավասարության կամ այլ հիմքով հակաիրավական միջազգային պայմանագրերի վիճարկման շատ օրինակներ կան, ընդ որում, նաև ընդամենը մի քանի տարի առաջ, կարելի է ասել մեր օրերում արձանագրված

օրինակներ: Մասնավորապես, Պանամայի կառավարությունը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի առջև 1973-ին հարց բարձրացրեց՝ Պանամայի ջրանցքի տարածքի նկատմամբ իր երկրի ինքնիշխանությունը վերականգնելու վերաբերյալ: Արդյունքում՝ ԱՄՆ-ի եւ Պանամայի միջեւ 1903-ին կնքված անիրավահավասար եւ ժողովրդի ինքնորոշման իրավունքը ոտնահարող պայմանագիրը վերացվեց եւ 2000-ին Պանամայի ջրանցքի տարածքը վերադարձվեց նրա օրինական տիրոջը:

Նույն կերպ վերացվեց 1887-ին Չինաստանին պարտադրված պայմանագիրը, որով չինական Մակաու թերակղզին հայտնվել էր Պորտուգալիայի տիրապետման տակ: Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը հրաժարվեց ճանաչել այդ հակահրավակ պայմանագիրը: Երկարատեւ գործընթացի արդյունքում Չինաստանը 1999-ին կարողացավ վերականգնել իր ինքնիշխանությունը սեփական տարածքի նկատմամբ:

Վերջին տարիներին միջազգային առյաններում օրակարգային խնդրի է վերածվել 1903-ին ԱՄՆ-ի եւ Կուբայի միջեւ կնքված անիրավահավասար պայմանագրի վերանայման հարցը: Այդ պայմանագրով կուբայական Գուանտանամո տարածքը հայտնվել է ԱՄՆ իշխանության ներքո: Կուբայի Հանրապետությունը ՄԱԿ-ում բազմիցս հայտարարել է, որ ԱՄՆ-ի կողմից Գուանտանամոյի տարածքի տիրապետումը ապօրինի է եւ ոտնահարում է Կուբայի ժողովրդի կամքը, իրավունքները եւ շահերը: Նշված խնդիրը մոտ ապագայում գուցե չի լուծվելու, սակայն միջազգային ասպարեզում Կուբայի համապատասխան քայլերը ԱՄՆ-ին զրկում են հետագայում տարածքի տիրապետման վաղեմությունը կամ Կուբայի լռելյայն համաձայնությունը իբրեւ պայմանագիրը վավերական համարելու վերաբերյալ սեփական պնդումների հիմնավորում օգտագործելու հնարավորությունից:

- Իրավունքի հանրաճանաչ սկզբունքների խախտմամբ Հայաստանից Թուրքիային օտարված տարածքների հարցը միջազգային բարձր մակարդակով երբեւէ քննարկման առարկա դարձե՞լ է:

- Չմոռանանք, որ ոչ այնքան վաղուց՝ 1945-ի հուլիս-օգոստոս ամիսներին, Երկրորդ համաշխարհային պատերազմում հաղթած երեք դաշնակից պետությունների ղեկավարները Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսի ընթացքում քննարկման առարկա էին

դարձրել Հայաստանից բռնի կերպով թուրքիային օտարված տարածքների հարցը: Հուլիսի 22-ին տեղի ունեցած նիստի ընթացքում անդրադառնալով նշված տարածքների հարցին, Ստալինը խոսքը փոխանցել է ԽՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Մոլոտովին, որը, մասնավորապես, ասել է. «Մենք համարում ենք, որ ԽՍՀՄ եւ Թուրքիայի միջեւ սահմանը որոշ տեղերում անարդար է: Իրոք, 1921-ին Խորհրդային Հայաստանից եւ Խորհրդային Վրաստանից տարածքներ են օտարվել՝ դա Կարսի, Արտվինի եւ Արդահանի հայտնի տարածքն է... »:

Հուլիսի 23-ի նիստում անդրադառնալով նույն հարցին, Ստալինը հայտարարել է. «... Մենք համարում ենք, որ Կարսի եւ Արդահանի շրջանում սահմանը սխալ է եւ մենք հայտարարել ենք Թուրքիային, որ եթե նա ուզում է մեզ հետ դաշինք կնքել, պետք է «սահմանն ուղղվի»: Ի դեպ, վերը կատարված մեջբերումները ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարության կողմից հրատարակված «Берлинская (Потсдамская) конференция руководителей трех союзных держав-СССР, США и Великобритании, сборник документов, Москва, Издательство политической литературы, 1984 г.» աշխատությունից են:

- Արդյոք կա՞ն միջազգային ատյաններ, որոնք իրավասու են քննության առնելու նշված պայմանագրերի անվավերության խնդիրը:

- Նմանատիպ իրավիճակներում հայտնված երկրների օրինակից ելնելով, կարելի է հարցը բարձրացնել ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովում, որն, իր հերթին, անհրաժեշտության դեպքում, ՄԱԿ-ի կանոնադրության 96-րդ հոդվածով նախատեսված կարգով, կարող է բարձրացված խնդրի իրավական կողմի վերաբերյալ պահանջել եւ ստանալ Միջազգային դատարանի խորհրդակցական եզրակացությունը:

Անդրադառնալով խնդրին մեկ այլ տեսանկյունից: Պետք չէ մոռանալ, որ խախտելով Հայաստանի իրավունքները՝ վերը նշված անվավեր պայմանագրերի միջոցով տիրանալով հայկական տարածքներին, Թուրքիան խախտել է ոչ միայն Հայաստանի՝ միջազգային իրավունքի սուբյեկտի, իրավունքները, այլեւ, միաժամանակ, բազմաթիվ հայերի սեփականության իրավունքը, որոնք ստիպված են եղել Թուրքիայի տարածքում թողնել իրենց ողջ անշարժ գույքը: Ընդ որում, դա մի այնպիսի խախտում է, որը չի ավարտվել կատարման պահին, այլ շատ դեպքերում տեւում է մինչ

օրս: Այժմ էլ կան մարդիկ, որոնք դեռ սեփականություն ունեն թուրքիայում, սակայն վերը նշված իրադարձությունների պատճառով մինչ օրս չեն կարող տիրել իրենց սեփականությանը:

Վերը նշվածի առումով պետք է նկատի ունենալ, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իրավասու է քննարկելու «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի խախտումների վերաբերյալ բոլոր այն գանգատները, որոնք, սահմանված չափանիշներին համապատասխան, անձինք ներկայացնում են այդ կոնվենցիան վավերացրած ցանկացած պետության դեմ: Ինչպես հայտնի է, Թուրքիան մույնպես վավերացրել է Եվրոպական կոնվենցիան, ուստի Եվրոպական դատարանն իրավասու է քննելու մաեւ Թուրքիայի դեմ տրված գանգատները:

Եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածը վերաբերում է անձի սեփականության իրավունքի պաշտպանությանը: Այդ հոդվածը, մասնավորապես, նախատեսում է, որ Կոնվենցիային միացած յուրաքանչյուր պետություն պարտավոր է յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար ապահովել իր գույքից անարգել օգտվելու իրավունքը: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր ոք, ով ներկայումս Թուրքիայում անշարժ գույք ունի, կարող է իր գույքը հետ պահանջել, իսկ չվերադարձման դեպքում դիմել Եվրոպական դատարան ընդդեմ Թուրքիայի:

- Այն, որ Թուրքիան Եվրոպական կոնվենցիան վավերացրել է 1990-ին, մինչդեռ հայերը Թուրքիայի տարածքում գտնվող իրենց սեփականություններից զրկվել են շատ ավելի վաղ, չի⁶ կարող առարկությունների պատրվակ ծառայեցվել:

- Այո, կարող է պատճառաբանվել, թե Եվրոպական դատարանի իրավասությունից դուրս է այնպիսի խախտումների քննարկումը, որոնք տեղի են ունեցել մինչեւ անդամ-պետության կողմից Կոնվենցիային միանալը: Սակայն Եվրոպական դատարանը համանման իրավիճակում քննության առնելով Լոիզիդուն ընդդեմ Թուրքիայի գործը, իր 18.12.1996 թ.-ի վճռով մի նախադեպ է սահմանել, որը կարող է շատ կարեւոր լինել մեզ համար: ‘Դիմողը՝ Լոիզիդուն, Կիպրոսի քաղաքացու էր: Եվրոպական դատարան ներկայացրած իր գանգատում նա նշել է, որ սկսած 1974-ից,

Թուրքիայի կողմից Հյուսիսային Կիպրոսի բռնազավթման պատճառով, գրկված է եղել այնտեղ գտնվող իր սեփականությանը տիրելու հնարավորությունից:

Թուրքիայի կառավարությունն, առարկելով Լոիզիդուի փաստարկների դեմ, պատճառաբանել էր, որ խախտումը, եթե այդպիսին եղել է, տեղի է ունեցել շատ ավելի վաղ, քան Թուրքիան միացել է Եվրոպական կոնվենցիային, հետևաբար նշված հարցը Եվրոպական դատարանի քննարկման առարկա լինել չի կարող:

Թուրքիայի առարկության կապակցությամբ Եվրոպական դատարանը նշել է, որ սեփականության իրավունքի խախտումը տվյալ դեպքում տեսական բնույթ է կրում՝ տարածվելով նաև այն ժամանակաշրջանի վրա, երբ Թուրքիան արդեն միացել էր Եվրոպական կոնվենցիային: Նշվածից ելնելով, դատարանը գտել է, որ տվյալ գանգատը վերաբերում է իր լիազորություններին եւ ճանաչել է Թուրքիայի կողմից դիմողի նկատմամբ Եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի խախտումը: Այսպիսով, Եվրոպական կոնվենցիայի ընձեռած հնարավորությունների օգտագործումը եւս մեկ ուղղություն է, որը կարող է արդյունավետ լինել մեր առջեւ դրված խնդիրների լուծման համար:

- Չժխտելով ձեր ասածի կարեւորությունը եւ այդ ուղղությամբ եւս քայլեր կատարելու անհրաժեշտությունը, այնուամենայնիվ, համազգային ու համապետական շահերի տեսանկյունից ավելի կարեւոր է ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովում Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերի վիճարկումը եւ այդ փաստաթղթերի ուժը կորցրած ճանաչելուն հասնելը: Եթե դա հաջողվի, ի վերջո, կա՞ն միջազգային հարկադրանքի միջոցներ, որոնցով հնարավոր կլիներ իրագործել ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի որոշումը կամ, եթե Հայաստանը խնդիրը միջազգային դատական այս կամ այն ատյանում քարծրացնի, այդ ատյանի համապատասխան որոշումը:

- Աշխարհը չափազանց արագ փոփոխվում է, միջազգային հարաբերություններում «ուժի իրավունքն» աստիճանաբար փոխարինվում է «իրավունքի ուժի» կարգախոսով: Չարգանում են ոչ միայն միջազգային վեճերի արդյունավետ լուծման, այլեւ, ինչն ավելի կարեւոր է, միջազգային հարկադրանքի մեխանիզմները: Համաշխարհային քաղաքակրթության եւ միջազգային իրավակարգի

զարգացումը, վաղ թե ուշ, հանգեցնելու են արդարության վերականգնմանը:

- Իսկ խնդիրը մինչ օրս չբարձրացնելու առումով արդյոք չե՞նք ուշանում:

- Գործընթացը, ինչպես իրավացիորեն նշում է նաև քաղաքական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Հովհաննես Ասրյանը, պետք է սկսել հնարավորին չափ շուտ: Այդ հարցին մասամբ արդեն անդրադարձա: Անվիճելի է, որ արդարությունը, վաղ թե ուշ, պետք է վերականգնվի, որի համար, սակայն, միջոցներ պետք է ձեռնարկվեն արդեն հիմա: Չգձգումները կարող են հանգեցնել նրան, որ հետագայում Հայաստանի Հանրապետությունն արդեն զրկված լինի Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերը իրավական մեխանիզմների միջոցով վիճարկելու հնարավորությունից: Չէ՞ որ «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի 23.05.1969-ի կոնվենցիայի 45-րդ հոդվածին համապատասխան, պետությունն այլևս չի կարող հղում կատարել պայմանագրի անվավերության կամ դադարեցման հիմքերի վրա... այն բանից հետո, երբ ինքը (պետությունը) իր վարվելակերպով պետք է համարվի լռությամբ համաձայնված, որպեսզի պայմանագիրը մնա ուժի մեջ... կամ համարվի վավեր: Այլ կերպ ասած, պետության լռությունը նրան զրկում է պայմանագիրը հետագայում վիճարկելու հնարավորությունից: Որպեսզի չհայտնվենք նման իրավիճակում, Հայաստանի Հանրապետությունը, առանց հետագա հապաղումների, պետք է պաշտոնապես հայտարարի Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերի անվավեր հիմքերի մասին, ինչպես նաև այն մասին, որ պատրաստվում է միջազգային ատյաններում վիճարկել այդ պայմանագրերը:

Նկար 1. Կարադաղի ամրությունները Կարսի բերդի համակարգում: Առաջին պլանում՝ Կարս գետը: